Պէտք էր որ անական և ուսումնական ազդեցութիւնը միանայ տղայոց բարքին տարամասրելին կրթուղին, պէտք էր որ մի և նոյն դպրոցի բոլոր վարժապետները գաղափարակից լինելին և համերաշխ, պէտք էր որ Հոգարարձուք համախոհ գտնուէին վարժապետաց հետ նոցա արդարացի պահանջումներին միջ։ Ոչ այդ քանի որ դժգոհից և ոչ միկը չկայ, նա մանաւանդ քանի որ տան և ուսումնարանի միջ աջակցութիւն չկայ, կամ այն է որ դպրոցը պէտք է հետևի տան ձևին, ի գործ դնելով նորա բոլոր բարբարոսական և հնադարեան վարմունքները, և կամ կրճնապատակելու է իւր այժմ և երկսայրից պատասխանութիւնը ինքը ինքը վնաս կատարելու է, հետևելով բոլոր դաշակատ գաղափարակիցներ այն խօսքին, որ ասում են՝ — «Երեխան պէտք ատելէ ատմամ տան միջ, նա այնքան ատելի մեծ սիրոյ արժան կ'ունենայ։ Ուսումնարանում ... նա արդարև ուսումնարանը պատուրան չէ, չունի օրինքով որոշուած պատիժներ, և վարժապետները այդ օրինաց կուրօրէն գործադրողներ չեն։ Ուսումնարանը չէ և ոչ պարան օրինաք յանցաւոր համարուած երեխաներին։ Ուսումնարանը մի կրճատան է։ Այդ տեղ տալ են անմեղ մանուկներ, որ նորա դիտակցութիւն սատանան, Ադամայեն իւրեանց չարն ու բարին, մի խօսքով զարգանան բարոյապէս և մտաւորապէս։ Ա՛հա՛ վարժապետներիս վերայ պարտք կայ ոչ թէ պատիժներն հետ ընտելացնել նրանց, այլ

ամենայն բարոյական ձիգն իմափիլ նոյն իսկ ընտելացածներուն մէջ և մի առելութիւն ձգել պէսպէս այն անարդ վարմունքը, իսկ եթէ փոխանակ բարոյական ուժի, վարժապետներն ձեռքը կտանք պատժելու իրաւունքը, ես ամենայն հոգւով հաւատացած եմ, որ այնու ինամ ուսումնարանը կպատնայ պատժարան և վարժապետները կը լինին միմիայն ներկայ նոյն իսկ միթենի ապաստակը հրաշք է դորձում, ինչպէս ասում են շատերը և ես հաւատում եմ, բայց ես հաւատալու հետ համոզուած եմ որ այդ հրաշագործ ձեռքը մի սուրբ պատասխանի ձեռք լինելու է և ոչ մեզ պէս մեղաւորներու։ Աւասիկ ահա և առաջ այդ սուրբ հնարինակութիւնը հասնելու է ինքնակրթութեամբ և բարոյական ուժով և ոչ պատիժների օգնութեամբ, որը մի կոպանակ վարժապետաց կը պահպանէ իւրեանց տպաւորութեան և տպիտութեան մէջ և միւս կողմանէ աշակերտներից ամենայն կըսարկացնէ, կուրութեան չափ, ձնշելով նոցա բոլոր ինքնուրոյնաւթիւնը և անհատական անձնաւորութիւնը, և ամենայն կը հասցնէ ամենարոյականութեան բարձր աստիճանին, իսկ միայն շատ սակաւք վերջ կը մնան այդ երկու ամենամեծատակարծ ծայրայեղութիւնից։

Ահա և ահա իմ կարծիքս պատժի մասին, իսկ մնանաւորներուն վերայ ես նայում եմ որպէս բացառութեանց վերայ։ Ընդհակառակն նորա ներկայութիւնը սովորական երևոյթ չէ, այլ բացառութիւն միանգամայն, ինչպէս հրեշները չեն սովորական ծնունդներ։

ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆԵՐ ՎԱՐԺԱՊԵՏԱՑ

1, Բոլոր վարժապետների մէջ պէտք է այնքան մեծ սէր և միութիւն լինի, որ այդ զգալի լինի աշակերտներին։ Երեք մէկը վշտացած է միուրիշից, պէտք է յայտնէ մանկավարժական ժողովին և պահանջէ նորա մտօգնութիւնը այդ մասին։

2, Ոչ մի վարժապետ մի ուրիշ վարժապետի չը պէտք է բամբասէ ժողովրդի մէջ, բայց ժողովի մէջ ամէն մէկը ազատ է նկատողութիւնքը միմիայն իւրաքանչիւրից վերայ անել առանց փաստեր յառաջ բերելով, առանց պատասխ պինդ բառեր գործ դնելու։

3, Վարժապետաց յարաբերութիւնը աշակերտաց հետ պիտի լինի եղբայրական սիրով, այդ սէրը զգալի պիտի լինի աշակերտներին։ Վարժապետը դասատուն մտնելիս և դասախօսութեան ժամանակ հոգու և դէմքի պուարձութիւն պիտի ներգնէ, երբէք չը պէտք է կնճռած և խոժոր դէմքով նայէ, չը պէտք է արհամարհական և սառուցնող նայուածք ձգէ աշակերտաց վերայ։

4, Վարժապետը պէտք է նկատէ միշտ թէ որոնք են աշակերտներից իւր հետ բաւականաչափ ընտանեցած և որոնք են որ զերծնք իւրմէ աշակերտ են համարում, և աշխատելու է որ այդ պակասները էլ ընտանեցնէ։ Ինչպէս ճարտար հիւրընկալը գիտէ իւր բոլոր հիւրերի սիրտը միապէս շահել, առանց մէկին միւսին անուշադիր թողնելու, նոյնպէս պէտք է լինի և վարժապետը իւր աշակերտաց վերաբերութեամբ, ամենքին հաւասար բաժին հանելով իւր քաղցր ակնարկից և ոգևորող յորդորներից, և ոչ թէ մի քանիսի վերայ շուռ իւր ակնարկը և միւսների դէմքի վերայ երբէք չկենդրոնացնէ իւր ուշադրութիւնը։

5, Վարժապետը դասախօսելու ժամանակ պէտք է ձայնի ներդաշնութիւնը պահպանէ, չը պէտք, որ դասախօսութիւնը ընդհատ, ու առուս, հանդարտ կացիք եւ ամենապարի բառերով, կամ քանոնով չխկչխկացնէ սեղանը, այլ կշռադատական, որ դասախօսութիւնը եւ մի եւ նոյն ժամանակ իր ակնարկութիւնը կը կենդրոնացնէ այն աշակերտի վերայ, որի ուշադրութիւնը ուրիշ բանի վերայ է ընկել։ Վնաս չունի, եթէ նոյն աշակերտը չը նկատէ, էլ այդ, պատճառ՝ բաւական է, որ մնացեալը նկատեն։ Դասախօսելու ժամանակ չը պէտք է ծիծաղացնելու ձեւեր անէ, ձեռք ու ոտքով, ձայնով կամ աչք ու ունքով, եթէ իսկապէս մտադիր էլ լինի ծիծաղացնել նորան։ Վարժապետը դասատան մէջ ուշ մի յանդիմանական խօսք չը պէտք է ասէ որ եւ իցէ աշակերտին, այլ միայն ուշի ուշով կնկատէ, թէ ով ինչպէս է վարում ինքը զինքը եւ իւր պատասխանութիւնը կը յայտնէ մանկավարժական ժողովին։ Վարժապետները երբեմնապէս աշակերտաց հետ կռիւն մտնեն, խօսել հասարակ բաների վերայ։ Երբեմնապէս կիրակի կամ ուրիշ օրերը կարող են աշակերտներից քանի մի հոգի միասին մի որ եւ իցէ վարժապետի մօտ դնալ այցելութեան լուրը կարդալու, կամ մի բան հարցնելու, խօսելու։ Այդ տեսակ ընտանեկան յարաբերութեանց ժամանակը կարելի է երկել, ծիծաղացնել, զուարճացնել, և այդ տեսակ յարաբերութիւնը ոչ միայն չեն պակասացնել վարժապետի հիղճնակութիւնը, այլ աւելի սիրելի կը կացուցանեն և կը դարձեն միանգամայն նորա հետ տատամսութիւնը։ Աշակերտի հետ անդրդութեան ժամանակ կարողն նորան այցելութեան երթալ, միխիթարել, սփոփել, բայց ի տարի է ծախքի մէջ չը ձգելով նորա ծնողացը։ Յետամնաց և թմրած աշակերտների վերայ

մանաւանդ առանձին ուշադրութիւն կը դարձնեն պարզել ընտանեկան յարաբերութեան մէջ ծագած խօսքով ասել, վարժապետաց յարաբերութիւնը աշակերտաց հետ այնպէս սիրով պիտի լինի, որ աշակերտը ուր և իցէ վարժապետին անծանելիս այնպէս ուրախանայ, ինչպէս մի մանուկ իւր ծնողին անծանելիս ուրախանում է, և ոչ մի վարժապետի շուռքը անծանելուն պէս փախչի և ծակամուտ լինի։ Երրորդ վարժապետին շրջապատումն աշակերտները ինչպէս հարուստ որդիք իւրեանց հարուստ ծնողին, այլ արդէն ապացոյց է նոցա անկեղծ սիրոյն և հաւատարմութեանը։

6։ Այն վարժապետները, որոնցից յոյս չկայ մի այս գիսի յարաբերութեան, նոքա կարող չեն կրթող լինել։ Այսպիսիք կարող են բարձր դասատանց մէջ մի որ և իցէ առարկայ ուսուցանել, բայց չէ կարելի յանձնել նոցա նախակրթարանը, ուր պիտի հիմնարկուի երիտասարդ բնութեան։ Նախակրթարանների մէջ միայն այն վարժապետները պէտք ունենան դաս, որոնք աւելի հեղինակութիւն և յարգ ու պատիւ ունին թէ գպրոցական և թէ հասարակական կեանքի մէջ։ Այսպէս ասելով ես ոչ միայն ընդդէմ չեմ, որ նոքա բարձր դասատանց մէջ էլ դաս ունենան, այլ այդ անհրաժեշտ եմ համարում, պատճառ՝ այդ հանգամանքն ևս քիչ ազդեցութիւն չունի փոքրերի վերայ։

Ըը նայելով այս բոլոր ասածներիս, ես ինքս էլ համոզուած եմ, որ սրբան աշխատանք գպրոցը նպատակի դրութիւն փոխարկել, գործել ասածնան կարող է մեզ գործել նորա մէջ մեկին կամ միւսին պատուհասանազանդ անելու։ Աստուած հրեղէն ողիք ուղարկեց բոլորովին անրիծ և անարատ, այլ սակայն նոցա մի մասը մեղաւոր գտնուեցաւ։ Այդ այնու ամե-

նայնիսկ ես կամենամ պարձենալ, որ աշակերտասէր մեծաց համար պէտք վարժապետները հետևելով Արդ ոյն Ա՛րիածնին՝ յանձն առնեն չարչարուիլ և իրենց արիւնով սրբել նզդա մեղքը։ Ա՛ռանց հոգևկան առնչութեան վարժապետաց կողմից, չէ կարող աւտու ճնարանը կրճատուած պատնեշ լինել արդարև մեծ առնչութիւն է վարժապետի հետևոր, երբ նկատում ես, որ այս ինչ աշակերտը ուրժանի էր մի փոքր աւելի ապտակի, բայց ամօթով մի առնձնացրել իւր կիրքը, աշխատում ես ցուցնել իւր գէմքի վերայ որ և է բարկացողութեան նշան և մի և նոյն ժամանակ աշխատում ես ամենայն սիրով և բարեխառնութեամբ մեղքը ուսանելու պիղ ձանապարհի վերայ դնել։ Այս էլ պիտի անել որ պատիժի դժուարութիւնը երկարատև չեն լինել. հետզհետէ կարգապահութեան հետ կընտելանան աշակերտները և դորանով կը թեթևացնեն վարժապետի գործը, որի դժուարութիւնը կլինի միայն խոտոր հետևողականութիւն պահպանել իւր մի անգամ բռնած ընթացքի մէջ։ Այլ և՝ այդ գործը այնքան կը թեթևանայ, որքան բոլոր վարժապետաց կողմից կը լինի մի և նոյն կարգի պահպանութիւնը։

Երբ և իրաւանչիւր պատուոյն մի վարժապետի միայն յանձնուած լինէր, այն ժամանակ մեծ դժուարութիւն չէր լինել բարոյական տպաւորութիւն գործելը, քան երբոր զանազան բնաւորութեան և հակումների մարդիկ են մեր գործում մի և նոյն պատասխանը, բայց մենք ներկայ ժամանակում չենք կարող իրաւանչիւր պատուոյն մի վարժապետի յանձնել, քանի որ չունինք պէս և մանաւորապէս այդ պաշտօնի համար պատրաստուած անձինք, որք բոլոր աւանդութեան առարկայքը միապէս լաւ գիտենան։ Այսպիսի դրութեան մէջ աւելի մեծ կարևորութիւն կայ ուրեմն, որ վարժապետաց

վարժուհիքը քան կարելւոյն միանման լինէին։ Որքան որ մի աշակերտ իւր անուղղայ վարուքը կարող էր ապականել իւր ընկերակիցներին, նոյնպէս և մի վարժապետ իւր անապատական և պատիւրակի անվայել ձևերովը ու խօսքերովը կարող է մի ամբողջ համբւ բարոյական ձիրն ու ջանքն ի դևրև հանել։ Ուստի ևս մի պատիժ միայն կարող եմ նշանակել, ինէ վարժապետից և ինէ աշակերտաց համար։ Ո՛չն վարժապետը, որը աշակերտին ուղիղու. շնորհք չէ ցոյց տալիս, նա պիտի արտաքսուի որպէս անընդունակ, և այն աշակերտը, որը ոչ մի բարոյական հնարով չէ ուղղուիլ, նորան առանց որ և իցէ ուրիշ պատիժ տալու պէտք է արտաքսել։

Գ. Ս.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՕԳՈՒՅԻՆ ՀԻՆ ՆԻ ՆՈՐ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Հ–ԹՀ–Ի–ՏՏ. ՀԵՆ ԴՊՐՈՑ № 1. էջ 27–36)

2

Նախընթաց յօդուածի մէջ մենք ցոյց տուինք Հայկական ազգային դպրոցների սկզբնաւորութիւնը, նոցա ուղղութիւնը և գործունէութիւնը, և այն նիւթաւոր և բարոյական հոգաբարձութիւնը, որը ունէին նոցա վերայ տէրութիւնը և հոգևոր իշխանութիւնը։ Ասացինք ևս մի գլխաւոր փաստը, որը ակնյայտնի վկայեցնում էր, Թէ այդ բազաւորական կառավարութիւնն և հոգևոր իշխանութիւնը սկզբում ջանքը և հոգածութիւնը ազգային լուսաւորութեան մասին, վիճակներում հիմնադրուած դպրոցն և Հայկական լեզուի գրերու գանելուն։ Այս միջոցներին քրիստոնէութիւնը արդէն այնպէս տարածուել էր բոլոր Հայաստանեայց մէջ և հաստատուել էր, որ աւելի չէր կարելի թողնել իւր գրութեան մէջ եկեղեցական ժամասացութիւնը։ Այդ և մանաւանդ սորբի լեզուով կատարած ժամասացութիւնը անհասկանալի էր ժողովրդի համար։ Հարկաւոր էր ունենալ թարգմանողներ, որը պիտի թարգմանէին ժողովրդի մայրենի և հասկանալի լեզուով եթէ ոչ ամբողջ ժամասացութիւնը, գոնէ աւետարանը, հին կաթուղիկոսների ընթերցուածները և մի քանի գլխաւոր աղօթքները։ Այս հանգամանքը ոչ միայն ծանրացնում էր և ուշացնում ժամասացութիւնը, այլև նաև ազացնում էր և բարդացնում քրիստոնէութիւնը,

տանէական ջերմեռանդութիւնը և Աստուածպաշտութեան սէրը ժողովրդի մէջ, այլ շատ անդամ բոլորովին անհնարին էր լինում այսպիսի թարգմանութիւնը, որովհետև ամենայն տեղ չկային թարգմանողներ։ Եր պատմագիրները վկայում են թէ երանելի Մեսրոպը իր առաքելական քարոզութիւնների ժամանակ հանդիպում էր շատ դժուարութիւններին—մի և նոյն ժամանակ նա և՛ կարդում էր եկեղեցու մէջ սուրբ գիրքը, և՛ թարգմանում էր կարդացածը ժողովրդին նորա մայրենի լեզուով, և հէնէ ուրիշն էր կարդում այն տեղ, ուր չկար սուրբ Մեսրոպը, լսողները—այսինքն՝ ժողովուրդը ոչինչ չէին հասկանում թարգմանող չլինելու պատճառով (13)։

Այսպիսի դրութիւնը յառաջ բերում էր հարկաւորութիւն որ ժամասացութիւնը կատարուէր ժողովրդի համար հասկանալի լեզուով, այսինքն հայկերէն լեզուով, իսկ սորա համար հարկաւոր էր ունենալ հայերէն թարգմանութիւններ Աստուածաշնչի և այլ եկեղեցական գրքերի, որի համար հարկաւոր էր ունենալ սեփհական, այսինքն մայրենի լեզուի գրեր։ Երանելի Մեսրոպը—Հայաստանեայց Եկեղեցւոյ այս քրոնաջան և անխոնջ մշակը—անմահացրեց իւր անուան յիշատակը պարգևելով իւր հայրենիքին ազգային լեզուի գրեր 406 թուին (14), Հազմատեսակ աշխատութիւններից և երկարատև ճանապարհ-

(13) Մովսես Խոր. եր. 238, Կորիւն, Ղազար Փարպեցի և այլք.

(14) Սուրբ Մեսրոպը ծնուեցաւ Տարօն գաւառի Հացեկաց գիւղում 361 թուին և վախճանուեցաւ 441 թուին։ Նաւարտելով իւր ուսմունքը՝ նա քարոզեցար դառաւ Մծբն Ներսես կաթողիկոսի մօտ. նորա մահից յետոյ Մեսրոպը Եռաւան հազարապետի յորդորանքով եղաւ պալատական քարոզեցար և թարգման Ներշակ Գ. Թագաւորի մօտ, որովհետև քաջ գիտէր

հորդութիւններից յետոյ, վերջապէս, Աստուածային օգնականութեամբ և շնորհիւ սուրբ Մեսրոպը կազմից հայկական լեզուի գրերը Միջագետում և ապա շատպէց դէպի իւր հայրենիքը։ Վռամշապուհ թագաւորը և սուրբ Սահակ Պարթևը ընդառաջ գնացին նորան մեծ հանդէսով և ընդունեցին նորան մեծամեծ պատուով։

Կարձրագոյն հովանաւորութեամբ և օգնականութեամբ Վռամշապուհ թագաւորի և Սահակ կաթողիկոսի, սուրբ Մեսրոպը իսկոյն սկսեց հաստատել շատ տեղերում դպրոցներ ազգին նոր հայկական գրագիտութիւնը տարածելու համար։ Մովսէս Խորենացին պատմում, թէ՝ «վերադարձաւ Մեսրոպը և. բերեց իւր հետ մեր լեզուի գրերը, և հրամանով Վռամշապուհ թագաւորի և Մեծին Սահակայ հաստատեց բոլոր գաւառներում դպրոցներ» 15)։ Մի և նոյնը պատմում և նորա կենսագրութիւնը յօրինող Կորիւնը 16)։ Սուրբ Մեսրոպը այնպէս շատպուում տարածել իւր գիւտը, որ դեռ Միջագետի

յոյն, ասորի և պարսիկ լեզուները. Ցետոյ Խոսրով Գ. թագաւորի ժամանակ Մեսրոպը թողից պալատական պաշտօնը և եղաւ վարդապետ. վանքում նա առանձին աշխատութեամբ ուսանում Սուրբ Գիրքը և սուրբ հարց գրութիւնները, և ապա սկսեց առաքելական պաշտօն կատարել քարոզելով քրիստոնէութիւնը ոչ միայն Հայաստանի շատ գաւառներում, այլ և Վրաց և Աղուանից երկրում։ Մեսրոպը, որպես և նորա պաշտպան Սահակը Հայաստանեայց Եկեղեցին դասել է ի շարս սրբոց. Մեսրոպի կենսագրութիւնը տես — Կորիւն, Մովսէս Խորենացի, Ղազար Փարպեցի, Ցովհաննէս Սարդոկոս, և այլն, և այլն.

(15) Մովս. Խոր. եր. 217.

(16) Կորիւն, եր. 13.

Առաջին քաղաքում նա բացեց առաջին դպրոցը նորագիւտ հայկական գրերը սովորացնելու համար 17)։

Կուն Հայաստանի մէջ առաջին դպրոցը հաստատուեցաւ Աղաթանգեղոսի մայրաքաղաքում, ինչպէսև այս բանին մասին չկան ուղղակի ցուցմունքներ ոչ Մովսէս Խորենացու, ոչ Ղազարիայի և ոչ միւս պատմագիրների գրութեանց մէջ, բայց այնուամենայնիւ այս հարցը թէ կարող է կասկածելի լինել, որովհետև այս քաղաքի մէջ բնակւում էին Աղաթանգեղոսը և Սահակը, որոց մեծ և շատ մեծ ուրախութիւն Մեսրոպը նոր նշաձեռագրերով։ Ուրեմն, Մովսէս Խորենացու վկայութեամբ, Աղաթանգեղոսը և Սահակը հրամայեցին կամ յանձնեցին մեծ Մեսրոպին հաստատել ուսումնարաններ ըստ գաւառներուց, որպէս թ չարիկ չէին կարող ուսանող ուսումնարանի բողնել բազմաթիւ մայրաքաղաքը Աղաթանգեղոսի համար կարևիկ նպատակ էր որ Աղաթանգեղոսում հաստատուեցան մի անդամից քանի մի դպրոցներ, որովհետև այստեղ աւելի շուտով կարելի էր ունենալ հարկաւոր վերահսկողութիւնը, քան թէ հեռաւոր և մինչև անգամ մօտաւոր գաւառներում։

Ուրեմն հետև ուրեմն Մեսրոպը պէտք էր ըղձալ իւր հայրենիքի բոլոր գաւառներում և ամենայն տեղ հաստատուելի դպրոցներ նոր գրագիտութիւնը տարածելու համար։ Այսպէս զբօսրինակ նա հաստատեց դպրոցներ Աշտիշատ, Դերջան և Հեղեցաց գաւառներում։ Մովսէս Խորենացին ասում՝ «վիրակացուներ նշանակելով իւր աշխէդնէն ըստ Աղունդը և Հնդովքը Աշտիշատ, Դերջանում Գինին եպիսկոպոսը, Հեղեցաց-

(17) Տես էր 10

Պանաքը, ինքն (Մեսրոպ) գալիս է Աղթամար (գաւառ)», 18)։ Կենսագրող Կորիւնի և Սահիթանոց Սիւնեաց եպիսկոպոսի (Օրբելեան) խօսքերից երևում է, որ սուրբ Մեսրոպը հաստատեց դպրոցներ և Սիւնեաց գաւառում 19)։ Այս երեք աստիճաններ հաստատեց նաև Գողթն, Խաղատական, Գարդման, Տաշչէր գաւառներում, որովհետև, Մովսէս Խորենացու վկայութեամբ 20), սուրբ Մեսրոպը արդէն հայկական նշանագրերը գտնելուց յետոյ քարոզում էր այս գաւառներում քրիստոնէութիւնը և ջնջեց մինչև այն ժամանակ մնացած հեթանոսութեան նշանները և նոր ծագած աղանդները։ Աղթամարում քրիստոնէութիւնը, Ս. Մեսրոպը չէր կարող օգուտ չքաղել յարմար հանգամանքից՝ բացատրելով դպրոցներ տեղական բնակիչներից հոգևորականներ պատրաստելու համար 21)։

Հաստատելով այսպէս քաղաքներ և գիւղաքաղաքներ պարսկական մասում, սուրբ Մեսրոպը սկսեց մտածել նոյնպիսի դպրոցներ հաստատելու մասին նաև Հայաստանի յունական մասում (22)։ Այս գնաց այնտեղ, բայց հակառակութ-

(18) Մով. Խոր. եր 257—8

(19) Կորիւն. եր 14 և Սահակ եպիսկոպոս Սիւնեաց. եր 38։

(20) Մով. Խոր. եր 258

(21) Սուրբ Մեսրոպը գպրոցներ հաստատեց ոչ միայն Հայաստանում, այլև Վրաստանում և Աղուանից երկրում, և այս բանի մասին վկայում են Կորիւնը — եր 15 և Մով. Խորենացին — եր. 248։

(22) Ճանաչ Աղթամար կոչեր ժամանակ, որ Հայր էր Փորը Թեղոտի, կառուցեցաւ Հայաստանի քաղաքական բաժանումից Պարսից և Ճանաչ Ջ. Հայոց երկրի արևելեան մասն անցաւ Պարսից Ձեռքը, իսկ արևմտեա-

թիւն և արգելք տեսաւ. Յունաց կառավարիչների կողմից Ս. Եսրովպը որոշից գնալ Կոստանդնուպոլիս և այնտեղ խնդրել Թողատրութիւն։ Ընձեռմբ անձին ներկայանալով փոքր ինչ դոս կոյսեր, նա բացատրեց պարոցների հաստատելու նպատակը, հետացրեց ամենայն տեսակ քաղաքական կասկածանքները և ոչ միայն ստացաւ Թողատրութիւն կայսերական հրովարտակով, այլ և Թէոդոսը հրամայեց Ս. Եսրովպի կարգադրութեամբ հաստատած հայկական դպրոցների ծախքը հոգալ կայսերական գանձարանից։ Այդց երկրի Յունական մասնի կառավարիչ Ընատոլիոսը, տեսնելով կայսերական հրովարտակը, սկսեց ցոյց տալ Ս. Եսրովպին յիակատար օգնականութիւն (23)։ Այս դպրոցներում հայկական գրագիտութեան վարժապետներ նշանակեց Ս. Եսրովպը երեք այն իր աշակերտներից, զորս տարել էր իր հետ և գնալով Կ. Պօլիս թողել էր Ս. Ներսիսեան քաղաքում (բարձր Ս.ք) նոյն տեղի Եկակ Եպիսկոպոսի խնամակալութեան տակ (24)։

Խոլոր նորահաստատ դպրոցներում Ս. Եսրովպը աշխատում էր ժողովել ընդունակ և ուշիմ մանուկներ. Թովհաս Եւորատսի՝ «Ս. Եսրովպը բերելով իւր հետ մեր լեզուի նշանագրերը՝ և Մեսրոպի ու Ս. Ծծին Սահակայ հրամանով՝

նը — Յունաց ձեռքը։ Թայց սորանով չվիրջացաւ Հայաստանի քաղաքական լինելութիւնը, որովհետև իշխանութիւն մասնում կար Հայոց Թագաւոր — Պարսկական մասնում Խոսրով Դ., Յունականում — Արշակ Դ, երկուքն էլ Արշակունիք (տես Մով. Խորեն. երես 231—232)։

(23) Կորիւն. եր 16—17, Մով. Խոր. եր 252—255. Կիրակոս Գանձակեցի Գանձ, եր. 18—19։

(24) Մով. Խոր եր 253։

ժողովելով ընթրեալ, ուշել, խաչառաւ, փափկայայն և եղկաթոգն մանուկներ, պարոցներ հասատատից բոլոր դասատներուն,,(25)։ Ահա նոր ուսումնարանները, հաստատուածները Ս. Սնտուկի ջանքով, թէպետև վարիչներին բաւականին մեծ խնամք և հովանաւորութիւն քաղաքական իշխանութեան կողմից, մանաւանդ նիւթական ապահովութեան մասին և թէպետ ունէին ընդարձակ շրջան ուսման բազմատեսակ առարկաներով ազգի ընդհանուր լուսաւորութեան նպատակով, բայց և այնպէս նոքա հնատամուտ էին լինում նաև մի գլխաւոր նպատակին — պատրաստել հայոց հոգևորականներ եկեղեցական ժամասացութիւնը արդին ժողովրդի ազգային լեզուով կատարելու համար։ Այդ այս նպատակին հասնելու համար բաւական չէր ուսանիլ դպրոցներ, այլ հարկաւոր էր ուսանիլ և թարգմանութիւններ Աստր Պարոց և աւրիշ եկեղեցական գրքերի, ուսան Ս. Սահակը և Ս. Սնտրոպը, իւրեանց աշակիր ունէրից մի քանիսի օգնականութեամբ, իսկոյն սկսեցին թարգմանել հայերէն լեզուով Աստուածաշունչը և միւս հարկաւոր գրքերը։

Նոր ուսումնարաններում, ինչպէս և հներում, բացի հայերէն լեզուից ուսուցանվում էին մի քանի առարկաներ, որոց մէջ գլխաւոր տեղը բռնում էին եկեղեցական գիտութիւնները. Այնպէս շարունակվում էին Հունաց և Ասորոց լեզուների դասատվութիւնը։ Ուսուցիչները երբեմն թէ գլխաւորապէս հոգևորականներ էին, բայ մեծի մասին Ս. Սահակի և Ս. Սնտրոպի պատրաստած աշակերտներից։ Պարոցները առաջուան պէս մնում էին հոգևոր իշխանութեան կառավարութեան տակ և Ս.

(25) Մով. Խոր. եր. 247

Ա՛հարոպը, քանի որ կինդանի էր, կատարում այսպէս ասել՝ ընդհանուր տէրութեան տեսչի և հոգատարձուի պաշտօնը։ Պատրոնները առաջուան պէս բոց էին ժողովրդի ամենայն տեսակ դատակարդերի մանուկների համար, բայց այնու ամենայնիւ կրում էին ծխական դպրոցների և հոգևոր ուսումնարանների կերպարանքը։ Իսկ ինչ վերաբերում է մանկավարժական միջոցներին, դատաստութեան եղանակին, ատարկաների բաժանման և դատակարդութեան, դասերի ժամանակին, ևլն, որը գործածվում էին Գոյկական դպրոցներում Ա. Աստհակի և Ա. Ա՛հարոպի օրով և նոցանից յետոյ, տարտղնեստարար չկան մեր պատմադրութեանդ մէջ այս հետաքրքրդրական բաների մասին ոչ մի տեղեկութիւններ։ Այդ կարելի է ենթադրել որ այն դարերում մանկավարժական միջոցները բաւական կաշտ ու կուպիտ էին, իսկ դատաստութեան եղանակը—դժոխար և ծանր։

— Աստհակ կաթողիկոսը և Ա՛հարոպ վարդապետը, այս մեծ մշակները իւրեանց ազգի լուսաւորութեան պարտիզում, չըբաւականացան միայն ազգային դպրոցներ հաստատելով, այլ ականին հոգալ աւելի մեծ բաների վերայ։ Նոքա ցանկացան հաստատել և բարձրագոյն ուսումնարաններ, բայց որքա հեռու հարկաւոր էր ունենալ գիտնական ուսուցիչներ։ Այս պատճառով նորա ուղարկեցին վարդանն չափ ընդունակ երիտասարդներ իւրեանց աշակերտներից Ս՛դեփոս, Խրիմեանն (Ղ. Պօլիս). Ա՛բիկնիք և Ա՛ղեքսանդրիա, բարձրագոյն գիտութիւններ և մանաւանդ աստուածաբանական գիտութիւններ ուսանելու համար, որպէս զի այս կերպով կարողանան յետոյ տարածել իւրեանց հայրենիքում նոյն ժամանակի բարձրասթիձան լուսաւորութիւնը։ Մեծ նպատակ կատարեցան բա-

ականին յայտնակ կերպով, այդ աշակերտներից շատերը հանա դիտացան իրենց երևելի գիտնական և հանճարեղ մատենի, զոր օրինակ՝ Եպիշէ, Ղազար Փարպեցի, Կորիւն, Մամբրէ, Վահան Տէր անյայտեմ (փիլիսոփայ), Եզնիկ և Մեծն Մովսէս Խորենացի։ Հայր Հայոց պատմութեան Ղևոնդ Երէցապետով իրենց հայրենիքը՝ այս երիտասարդ գիտնականները, վարդապետական դասազանը ձեռքին 26), սկսին տարածել իրենց հետ բերած գիտութիւնները Հայաստանի մէջ։ Այդ ոչ միայն ուսուցչութիւն էին անուամբ դպրոցներում, այլ և գործ մատնաւոր կերպով, բոլոր և պարապում մէին մատենագրութեամբ։ Այդ օգնում էին սուրբ Սահակին և սուրբ Մեսրոպին Հայատառաձայնը հարմարմանելու ժամանակ, ինչպէս թարգմանելու նրանց յունարէնից և ասորերէնից ընտիր շարադրութիւններ և մանաւանդ երևելի աստուածաբանական հեղինակութիւններ, յորինելին փիլիսոփայական և գիտնական շարադրութիւններ, աստուածաբանական մեկնութիւններ, պատմագրու-

(26) Սակայն յայտնի է որ սուրբ Սահակի և սուրբ Մեսրոպի հայտարած բոլոր աշակերտները, վիրադառնալով իրենց հայրենիքը, եղան հոգևորականներ նոցանից ոմանք հասան եպիսկոպոսական աստիճանին, ինչպես գործերնակ նշանչեն. Մովսէս Խորենացին և ուրիշ, և եղան գաւառական եպիսկոպոսներ կամ առաջնորդներ։ Իսկ միւս նոցանից՝ Ծովինար Մեսրոպի մահից յետոյ, որը վեց ամիս կաթողիկոսական պաշտօն վարեց սուրբ Սահակի մահից յետոյ, քահանայական աստիճանով արժանացաւ կաթողիկոսական գահին, ու մէկ ուրիշն այս աշակերտներից շատերը ստացան հոգևորական կոչում. հաստատվում Մովս Խոր խօսքերով թէ՝ յետոյ (այսինքն Սահակի մահից յետոյ) ՃՀՁՆ Սահակի աշակերտներ իրբև կնճռոտեալ ցուրտ գաւառներում, ընկղմեալ վանօք և խոչընդոտեալ նոցա քաչնէ—փքութեամբ։ (Մովս. Խոր. եր 270)։

բիւններ, եկեղեցական ազօթքներ եւ շարականներ, եւ այնպիսի վաեմ ու հոյակապ ոճով, որ ոչ միայն առեղծեցին ազգային մատենագրութիւն, այլ եւ նուիրեցին այդ նորաթոռջոջ մատենագրութեան առնի ջուր — հինգերորդ դար։

3.

— Ընդելով բոլոր վերոյիշեալ բարենպաստ եւ յաջողակ պայմանները վերայ, որք են — տէրութեան օդնականութիւն, հոգեւոր իշխանութեան ջանք եւ գործունէութիւն, գիտնական ուսուցիչների ներկայութիւն, — այնու ամենայնիւ հայկական դպրոցները չեին կարող անմիջապէս, ընդհանուր եւ կանոնաւոր կարգացումն շատ պատճառներով։ Յիշենք այս առաջին պատճառներից գլխաւորագոյնները։

1) Թէպէտ Տրդատ թագաւորը, ըստ վկայութեան Ագաթանգեղոսի, ինչպէս յիշեցինք իւր տեղում, պատուիրեց արքունի գանձարանից հոգալ ապագային դպրոցների ծախքը, բայց Մովս. Խորենացու և Կորիւնի խօսքերը Վաստակոտի հրամանով և օգնութեամբ կարելի է մասամբ իւիք հասկանալ և նրա թագաւոր ժառանգակալների մարդով, բայց և այնպէս պատմագրութեանց մէջ չկան տեղեկութիւններ որ տէրութիւնը ամենայն տարի տար հարկաւոր եղած գումար թագաւորութեան մէջ գտնուած բոլոր դպրոցների պահպանութեան համար, կամ ապահովացնէր նոցա նրա թաւոր լինելութիւնը յատկացնելով մշտական և որոշ տարեկան գումարներ։ Պատճառ չկայ որ այսպիսի կարգադրութիւն արած պիտի լինի տէրութիւնը դպրոցների հաստատութեան սկզբներում, մանաւանդ Վաղարշապատ մայրաքաղաքի դպրոց-

Ներքի հանար. բայց այդպիսի կարգադրութիւնը հազիւ թէ յաջողութիւն ունենար լինելու Ազգասիրով ազգային պարագլուխներից ոչ միայն գիտնական պաշտօնակատարներ, ոչ քաղաքական գործակատարներ, Այլոց ակրութիւնը մինչև թափանցելն անկման և խափանման օրը շատ սակաւ հոգում էր ազգային դպրոցների հաստատութեան և յառաջադիմութեան վերաբերեալ։ Ընդհակառակն, այդ դպրոցները բոլոր ընդհանուր ազգութիւնից ունենալով և առանձին նպատակ—այն է հոգևոր բանականներ պատրաստել, լիակատարապես յանձնուած էին հոգևոր իշխանութեան ընչպէս նրա բարոյական ապահովութեան կողմից, նոյնպէս և քարոզական և ուսումնական կատարելութեան կողմից։ Այսպէս ուրեմն հայկական դպրոցները միշտ հաստատուեցին և պահպանուեցին հոգևորականների ջանքով և հոգածութեամբ և բարեպաշտ ուղղասէր մարդոց յաճախակամ նուէրներով։ Նոքա այսպիսի իսկ կատարելութեան պատճառով հայկական դպրոցները գտանելու էին ընդ միմեանս եկեղեցիները, վանքերը և ուխտատեղիները մեռ։ Ու և նոյն պատճառով այդ դպրոցները երբէք չէին վայելում և չէին կարող վայելել նրբիբաւոր կողմից արժանապէս ապահովացրած պրութիւն, իսկ առանց սորա դպրոցները չէին կարող ունենալ լիակատար և ընդարձակ յառաջադիմութիւն, մինչև անգամ յարատևութիւն։ Նրբիբաւոր պակասութիւնը առաւելանում էր նորանով, որ առհասարակ սովորական էր ձրի ուսուցանել աշակերտներին, որովհետև մեզ էր համարվում մատուռ—հոգևոր սնունդը վաճառել վարձով. միայն ծնողների յօժար կամքին էր թողած տալ որպիսի և իցէ նուէրներ, ըստ միմեանց մասին ցոյսան, իւղ, պանիր, բուրդ և այլն։ Ուսման անվարձ լինելու գաղափարը մնացել էր մեր ազգի մէջ

մինչև 12 դարը և այդ ժամանակ ստույգ օրինքի կամ հին դեկտական կանոնի գործ ունի։ Մխիթար Գոշի 26) Դատաստանագրքի մէջ մենք տեսնում ենք տուգանքին յօդուածը (կանոն), որը արգիլում է վարձ ստանալ մանուկներին ուսման համար։ Դատաստանագրքի առաջին մասնի 112-րդ յօդուածը ասում է. «Պանդոկային հրամանով ոչ է պարտ մանուկներըն ուսուցանել վարձով. նիհ որբեան հարկաւոր է առնել նոցա վերայ բոլոր խնամքը, իսկ նիհ որբ չեն՝ միայն կերակուրը և շորերը տիրոջ հոգան նոցա ծնողներըն։ Եւ նիհ կարօտութիւն ոչնչանայ (ծնողներըն) և իւրեանց յօժարութեամբ ընծայ կտան ուսուցանողներին, արժանի հոգևոր ներժանողներին մարմնաւորըն հնձել, իսկ նիհ ապրատ կրնին — չպահանջել։ Ապայց նիհ մկրը (ուսուցանողներից) կշտիկառակ և կրնաւորութ — իրաւացի է, որ հատուցանուի նորան միայն այն, ինչ որ ծախք առնեցել է մանկան (աշակերտի) վերայ, այլ ոչ նիհ (վարձ) հոգևոր շնորհքի փոխարէնն։ Դատաւորներին արժանի է հոգևորապէս՝ հետևել այս կանոնին,, 27)։

Հոգեկան դպրոցների նիւթական ապահովութեան անգոհացուցիչ դրութիւնը հետևեալ դարերում առաւել ևս վատացաւ, ինչպէս կտեսնենք յետոյ։

(Կ շարունակուի)։

---

(26) Մխիթար Գոշը ծագեցաւ 12 դարու վերջերում և 13 դարու սկիզբներում. մենք պատրաստուում ենք մի ընդարձակ շարադրութիւն, որի մէջ իրաւագիտութեան աչքով քննում ենք Մխիթար Գոշի Դատաստանագիրքը, որը չափազանց արժանի ուշադրութեան հեղինակութիւն է հայկական իրաւարանական աղբիւրի մասնագրութեան մէջ։

(27) Հետագիր Դատաստանագրքի Մխիթար Գոշի, էջ 43-ի մասնաւորապէս. № 49։